ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/105

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.07.2018թ. թիվ 03/26-3/12482-18 գրությամբ «Սեմանգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.07.2018թ. թիվ ԴՎԱ/2431 գրության հիման վրա, 10.07.2018թ. թիվ 03/26-3/12482-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Սեմանգ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Սեմանգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Սեմանգ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ «Սեմանգ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կահույքի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետև նաև՝ Ընթացակարգ) և 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից (մասակցի կողմից ներկայացրած գնային առաջարկը կազմել է ընդամենը 400 020 ՀՀ դրամ):

Ընթացակարգի առաջին չափաբաժնի մասով նախատեսված ծառայությունների համար նախատեսված առավելագույն գումարը կազմել է 7 000 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցնող մասնակից «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել են հրավերով նախատեսված որակավորման չափանիշները, որոնք Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատելու արդյունքում՝ Ընկերությունը հանձնաժողովի կողմից ճանաչվել է ընտրված (հաղթող) մասնակից:

Որպես նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրեր, «Սեմանգ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին է ներկայացրել հետևյալ պայմանագրերը՝

- 06.06.2017թ. «Երևանի Ռ. Միրոյանի անվան թիվ 77 դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքված «Գույքի վերանորոգման աշխատանքների» թիվ 77-17/01 գնման պայմանագիրը (ծավալը գումարային արտահայտությամբ՝ 714 000 ՀՀ դրամ), ներկայացվել է նաև հանձնման–ընդունման արձանագրության պատճենը: Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված՝ աշակերտական սեղանների և աթոռների վերանորոգման աշխատանքները ներառում են հետևյալ աշխատանքները՝ հին ներկի մաքրում, նոր ներկով նորոգում, զոդման աշխատանքներ, նոր լամինատի տեղադրում, սեղանի հավաքում, ներկ և լուծիչ, նոր խցանների տեղադրում:

- 14.04.2015թ. «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի հետ կնքված «Ծառայությունների մատուցման» պայմանագիրը (ծավալը գումարային արտահայտությամբ՝ 3 870 000 ՀՀ դրամ), ներկայացվել է նաև ընդունող կողմի գրավոր հավաստումը:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրի առարկա է հանդիսանում թվով 4464 աթոռների և 2232 սեղանների համար պահանջվող երկաթի ծռելու և զոդելու ծառայությունները, իսկ նույն պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ կատարողը պարտավորվում է հաշվարկային փաստաթղթով ստանալ ապրանքներ Պատվիրատուից կամ նրա ներկայացուցչից, ինչպես նաև դրանք հաշվարկային փաստաթղթով հանձնել Պատվիրատուին կամ նրա ներկայացուցչին: Տեղեկացնել Պատվիրատուին ծառայության մատուցման ավարտի մասին, որից հետո Պատվիրատուն երկու օրվա ընթացքում պարտավոր է ծռված և զոդված երկաթը տեղափոխել փոշեներկման:

- 06.11.2017թ. «Աշտարակի Վ. Պետրոսյանի անվ. հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքած «Դպրոցական գույքի վերանորոգման ծառայությունների մատուցման» թիվ ՀՀ ԱՄԱՇ-ՄԱԳՎԾՄ-17/05 պետական գնման պայմանագիրը (ծավալը գումարային արտահայտությամբ՝ 950 000 ՀՀ դրամ), ներկայացվել է նաև հանձնման-ընդունման արձանագրության պատճենը: Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված է դպրոցական գույքի վերանորոգում՝ (սեղան 2 աթոռով, ներսենյակային դռներ):

Նշված պայմագրերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար, Ընկերությունը հանձնաժողովի կողմից ճանաչվել է ընտրված (հաղթող) մասնակից:

Այնուհետև 18.05.2018թ.՝ սույն ընթացակարգի վերաբերյալ ֆիզիկական անձ Դավիթ Թովմասյանի կողմից ներկայացվել է բողոք, որը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.06.18թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/72 որոշմամբ մասնակի բավարարվել է և դադարեցվել է հանձնաժողովի կողմից «Սեմանգ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու որոշումը (բողոքի քննության արդյունքում մասնակցի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագիրը գնահատվել է ոչ նմանատիպ):

Մասնավորապես, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 08.06.18թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/72 որոշմամբ գտել է, որ 14.04.2015թ. «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի հետ կնքված «Ծառայությունների մատուցման» պայմանագրով նախատեսվել է ընդամենը

աթոռների և սեղանների համար պահանջվող երկաթի ծռելու և զոդելու ծառայությունները, որի շրջանակներում կատարողը հաշվարկային փաստաթղթով ստացել է ապրանքներ Պատվիրատուից, այնուհետև, երկաթի ծռելու և զոդելու ծառայություններն ավարտելուց հետո, հաշվարկային փաստաթղթով հանձնել է Պատվիրատուին, որն էլ ծռված և զոդված երկաթը տեղափոխել է փոշեներկման: Այսինքն, ըստ բողոքը քննող անձի, պայմանագրով համանման համարվող կահույքի վերանորոգման ծառայություններ նախատեսված չեն եղել և չեն մատուցվել:

Միևնույն ժամանակ բողոքը քննող անձը գտել է, որ ներկայացրած մյուս պայմանագրերը (06.11.2017թ. «Աշտարակի Վ. Պետրոսյանի անվ. հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքված «Դպրոցական գույքի վերանորոգման ծառայությունների մատուցման» թիվ ՀՀ ԱՄԱՇ–ՄԱԴՎԾՄ-17/05 պետական գնման պայմանագրի և 06.11.2017թ. «Աշտարակի Վ.Պետրոսյանի անվ. հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքված «Դպրոցական գույքի վերանորոգման ծառայությունների մատուցման» թիվ ՀՀ ԱԱԱՇ-ՄԱԴՎԾԱ-17/05 պետական գնման պայմանագիրը՝ ընդհանուր գինը 1 664 000 ՀՀ դրամ) իրենց տեխնիկական բնութագրերով նախատեսված աշխատանքների համանման են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԴՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված աշխատանքներին:

Սակայն նշված պայմանագրերի գինը (ընդհանուր գինը 1 664 000 ՀՀ դրամ) համեմավել է ոչ թե «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկի հետ (400 020 ՀՀ դրամ), այլ Ընթացակարգի նախահաշվային գնի (7000 000 ՀՀ դրամ) հետ:

Արդյունքում արձանագրվել է, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով սահմանված՝ կահույքի վերանորոգման և պահպանման ծառայություններ (գրասենյակային գույք և կահույք) ծառայությունների գնման համար նախատեսված առավելագույն գումարը կազմում է 7 000 000 ՀՀ դրամ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԴՀԱՊՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համար «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ նախկինում կատարված 06.11.2017թ. «Աշտարակի Վ. Պետրոսյանի անվ. հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքված «Դպրոցական գույքի վերանորոգման ծառայությունների մատուցման» թիվ ՀՀ ԱՄԱՇ–

ՄԱԳՎԾՄ-17/05 պետական գնման պայմանագիրը և 06.11.2017թ. «Աշտարակի Վ. Պետրոսյանի անվ. հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքված «Դպրոցական գույքի վերանորոգման ծառայությունների մատուցման» թիվ ՀՀ ԱՄԱՇ-ՄԱԴՎԾՄ-17/05 պետական գնման պայմանագիրը չեն հանդիսանում նմանատիպ պայմանագրեր, քանի որ դրանց շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս է Ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, և դրանցից յուրաքանչյուրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Ուստի, Հանձնաժողովը՝ «Սեմանգ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելով և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելով՝ գործել է ոչ իրավաչափ: Վերոհիշյալ որոշման հիման վրա «Սեմանգ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել՝ մասնագիտական փորձառության որակավորման չափանիշին չբավարարելու հիմքով:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2018թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության՝ հանձնաժողովը 28.06.2018թ. որոշեց մերժել «Սեմանգ» ՍՊԸ-ի հայտը և գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով «Սեմանգ» ՍՊԸ-ի տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

Ընկերությունը նշել է, որ «Սեմանգ» ՍՊԸ-ն չի ներգրավվել որպես 3-րդ անձ 18.05.2018թ. ֆիզիկական անձ Դավիթ Թովմասյանի կողմից ներկայացված թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/72 բողոքի քննությանը, որի ժամանակ քննարկվել է «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված պայմանագրերի համանմանության հարցը, և Ընկերությունը զրկվել է իր շահերը պաշտպանելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:

Միևնույն ժամանակ նույն կետով սահմանվում է, որ հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Տվյալ ընթացակարգի հրավերի 2.5 կետի «ա» ենթակետի համաձայն՝ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում գրասենյակային գույքի կամ կահույքի կամ զինվորական կամ հոսպիտալային մահճակալների նորոգման ծառայությունների մատուցված լինելը:

Ընկերությունը գտնում է, որ «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի հետ կնքված «Ծառայությունների մատուցման» պայմանագրի առարկա է հանդիսանում թվով 4464 աթոռների և 2232 սեղանների համար պահանջվող երկաթի ծռելու և զոդելու ծառայությունները, լիովին համապատասխանել է Ընթացակարգի հրավերով որպես համանման նախատեսված գրասենյակային գույքի կամ կահույքի կամ զինվորական կամ հոսպիտալային մահճակալների նորոգման ծառայություններին, քանի որ տվյալ պայմանագրի շրջանակներում նույնպես իրականացվել է գրասենյակային գույքի նորոգման ծառայություններ:

Բացի այդ, տվյալ դեպքում անհրաժեշտ էր առաջնորդվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 65-րդ կետի պահանջներով և «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը ամբողջությամբ դիտարկել համանման (նմանատիպ), քանզի դրանով մատուցված ծառայությունները դասվում են հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբին:

Ավելին, եթե այստեղ անգամ առկա լիներ տնտեսական գործունեության տեսակների տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորություն, ապա Կարգի նույն կետի ուժով՝

անհրաժեշտ էր առկա տարբերությունը մեկնաբանել հօգուտ մասնակցի, ինչը սակայն չի կատարվել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սակայն խախտելով ՀՀ կառավարության նշված որոշման համապատասխան կետը՝ Ընթացակարգի հրավերի 2.5 կետով պատվիրատուի կողմից սահմանվել է հետևյալը՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված

ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն հրավերով սահմանված առավելագույն գնի քսան տոկոսից:

Հրավերի գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների նշված ակնհայտ խախտման հետևանքով «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 400 020 ՀՀ դրամ գնային առաջարկի պայմաններում նրա կողմից ներկայացրած և գնումների հետ կապված բողոքը քննող անձի կողմից բավարար գնահատված 1 664 000 ՀՀ դրամի ընդհանուր գնի պայմանագրերը գնահատվել են ոչ բավարար, քանի որ համեմատվել են ոչ թե իր գնային առաջարկի հետ, ինչպես դա պահանջում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 61-րդ կետը, այլ տվյալ չափաբաժնի համար սահմանված նախահաշվային գնի հետ:

Նման խախտումների արդյունքում «Սեմանգ» ՍՊԸ-ի շահերը խախտվել են Ընթացակարգի բոլոր փուլերում, իսկ ոչ իրավաչափ պահանջների արդյունքում ներայումս քննարկվում է «Սեմանգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել վերոհիշյալը, «Սեմանգ» ՍՊԸ-ին չվերագրել գնումների գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում և Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/105 ընթացակարգի շրջանակներում 12.07.2018թ. ժամը 11:15-ին և 16.07.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 16.07.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են գրավոր ներկայացված դիրքորոշումը, նշելով, որ Ընկերության կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերը գնահատվել են ոչ բավարար, քանի որ դրանք համեմատվել են ոչ թե Ընկերության գնային առաջարկի հետ, ինչպես պահանջում է ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 61-րդ կետը, այլ տվյալ չափաբաժնի համար սահմանված նախահաշվային գնի հետ:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.07.2018թ. թիվ ԴՎԱ/2431 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ կարիքների համար կահույքի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 2 մասնակիցներ, այդ թվում՝ «Սեմանգ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Սեմանգ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Ընկերության կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացված՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում Ընկերությունը հանձնաժողովի կողմից ճանաչվել է ընտրված (հաղթող) մասնակից: Այնուհետև, 18.05.2018թ.՝ սույն ընթացակարգի վերաբերյալ ֆիզիկական անձ Դավիթ Թովմասյանի կողմից ներկայացվել է բողոք, որը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.06.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/72 որոշմամբ մասնակի բավարարվել է և դադարեցվել հանձնաժողովի կողմից «Սեմանգ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու որոշումը (բողոքի քննության արդյունքում մասնակցի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագիրը գնահատվել է ոչ նմանատիպ): Հիմք ընդունելով նշված փաստը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է առաջարկել «Սեմանգ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը, սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում և կարգով չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով «Սեմանգ» ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/105 ընթացակարգի շրջանակներում 12.07.2018թ. ժամը 11:15-ին և 16.07.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստերիի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/105 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/105 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կահույքի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Սեմանգ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Սեմանգ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.04.2018թ. որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.05.2018թ. ժամը 12:15-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով կայացված որոշմամբ «Սեմանգ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և Ընկերությանը Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտարարել է ընտրված մասնակից: Նույն կետով գնահատող հանձնաժողովը որոշել է անգործության ժամկետի ավարտից հետո Ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4. Ֆիզիկական անձ Դավիթ Թովմասյանը 18.05.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոք է ներկայացրել խնդրելով անվավեր ճանաչել «Սեմանգ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին գնահատող

հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ և «Սեմանգ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 08.06.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/72 որոշմամբ մասնակի բավարարել է Դավիթ Թովմասյանի 18.05.2018թ. ներկայացրած բողոքը, և որոշել է պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «Սեմանգ» ՍՊԸ-ին թիվ 4 արձանագրությամբ հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 25.06.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «Սեմանգ» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/72 որոշումը՝ որոշել է, որ «Սեմանգ» ՍՊԸ կողմից ներկայացված՝ նախկինում կատարված պայմանագրերը չեն հանդիսանում նախկինում կատարված համանման (նմանատիպ) պայմանագրեր, միևնույն ժամանակ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները և շտկված տարբերակը ուղարկել գնահատող հանձնաժողովի քարտուղարին:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2018թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել, ուստի Ընկերության հայտը մերժվել է՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին չբավարարելու պատճառով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.07.2018թ. թիվ 03/26-3/12482-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.07.2018թ. թիվ ԴՎԱ/2431 գրությունը, «Սեմանգ»

ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրավոր դիրքորոշումը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետով նախատեսվել է, որ մասնակիցը «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքնագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստումը:

Ընդ որում՝ մասնակցի որակավորումն այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կահույքի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Սեմանգ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***400 020 ՀՀ դրամ:***

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված

ծածկագրով Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Սեմանգ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.04.2018թ. որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով նախատեսվել է, որ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Հրավերով նախատեսվել է, որ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն հրավերով սահմանված առավելագույն գնի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով ***նմանատիպ են համարվում գրասենյակային գույքի կամ կահույքի կամ զինվորական կամ հոսպիտալային մահճակալների նորոգման ծառայությունների մատուցված լինելը:***

«Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից որպես նմանատիպ պայմանագրեր ներկայացվել են՝

- Ընկերության և «Երևանի Ռ. Միրոյանի անվան թիվ 77 դպրոց» ՊՈԱԿ-ի միջև 06.06.2017թ. կնքված «Գույքի վերանորոգման աշխատանքների կատարման» թիվ 77-17/01 պայմանագիրը ***(պայմանագրի ընդհանուր գինը՝ 714 000 ՀՀ դրամ)***.

- Ընկերության և «Աշտարակի Վ. Պետրոսյանի անվ. հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի միջև 06.11.2017թ. կնքված «Դպրոցական գույքի վերանորոգման ծառայության մատուցման» «ՀՀԱՄԱՇ-ՄԱԳՎԾՄ-17/05» ծածկագրով պայմանագիրը ***(պայմանագրի ընդհանուր գինը՝ 950 000 ՀՀ դրամ).***

- Ընկերության և «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի միջև 14.05.2015թ. կնքված աթոռների և սեղանների համար պահանջվող երկաթի ծռելու և զոդելու ծառայությունների մատուցման պայմանագիրը ***(պայմանագրի ընդհանուր գինը՝ 3 870 000 ՀՀ դրամ):***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.05.2018թ. ժամը 12:15-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով կայացված որոշմամբ «Սեմանգ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և Ընկերությանը Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտարարել է ընտրված մասնակից: Նույն կետով գնահատող հանձնաժողովը որոշել է անգործության ժամկետի ավարտից հետո Ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը Դավիթ Թովմասյանի 18.05.2018թ. բողոքի հիման վրա, 08.06.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/72 որոշմամբ որոշել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «Սեմանգ» ՍՊԸ-ին թիվ 4 արձանագրությամբ հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 25.06.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «Սեմանգ» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/72 որոշումը, որոշել է, որ «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ նախկինում կատարված

պայմանագրերը չեն հանդիսանում նախկինում կատարված համանման (նմանատիպ) պայմանագրեր, քանի որ դրանց շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը՝ գումարային արտահայտությամբ պակաս է Ընթացակարգի շրջանակներում «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հիսուն տոկոսից և դրանցից յուրաքանչյուրի ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի քսան տոկոսից: Ընկերությանն առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները և շտկված տարբերակը ուղարկել գնահատող հանձնաժողովի քարտուղարին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2018թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել, ուստի Ընկերության հայտը մերժվել է՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին չբավարարելու պատճառով:

Այսպիսով՝ Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: ***Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:***

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ նմանատիպ են համարվում գրասենյակային գույքի կամ կահույքի կամ զինվորական կամ հոսպիտալային մահճակալների նորոգման ծառայությունների մատուցված լինելը:

«Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից որպես նմանատիպ ներկայացված պայմանագրերից Ընկերության և «Երևանի Ռ. Միրոյանի անվան թիվ 77 դպրոց» ՊՈԱԿ-ի միջև 06.06.2017թ. կնքված թիվ 77-17/01 պայմանագրով նախատեսվել են գույքի վերանորոգման աշխատանքների կատարում, իսկ Ընկերության և «Աշտարակի Վ. Պետրոսյանի անվ. հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի միջև 06.11.2017թ. կնքված «ՀՀԱՄԱՇ-ՄԱԳՎԾՄ-17/05» ծածկագրով պայմանագրով նախատեսվել են դպրոցական գույքի վերանորոգման ծառայության մատուցում: Ընդ որում առաջին պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ կազմել է ***714 000 ՀՀ դրամ, իսկ երկրորդ պայմանագրի դեպքում՝ 950 000 ՀՀ դրամ:***

Ընկերության կողմից ներկայացված ***գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 400 020 ՀՀ դրամ:*** Այսպիսով, հիմք ընդունելով Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետն արձանագրում եմ, որ «Սեմանգ» ՍՊԸ-ի կողմից որպես համանման ներկայացված պայմանագրերի շրջանակներում մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ ***գումարային արտահայտությամբ, որը կազմում է <u>1 664 000 ՀՀ դրամ,</u> պակաս չէ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի (400 020 ՀՀ դրամ) հիսուն տոկոսից,*** իսկ նշված պայմանագրերից ***<u>առնվազն մեկի</u> շրջանակներում մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ Ընկերության կողմից ներկայացված <u>գնային առաջարկի քսան տոկոսից:</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերը համապատասխանում են Կարգի 61-րդ կետի պահանջներին և համարվում են նմանատիպ, ուստի գտնում եմ, որ Ընկերությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած

պարտավորություն: Ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.07.2018թ. թիվ 03/26-3/12482-18 գրությամբ «Սեմանգ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05009344) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ